

ԿԵՐՊ ԵՎ ԿԵՐՊԻՍԱՍՏՆԵՐ

Ա. Գ. ԲԱՆՇՅԱՆ (Փարիզ)

Քայի գործողության կերպի ըմբռնումը լեզվաբանության կնճռոտ հարցերից մեկն է: Տարբեր լեզուներում կերպը ներկայանում է ինչպես երկանդամ, այնպես էլ եռանդամ հակադրությունների տեսքով: Գրական արևելահայերենի քերականության մեջ կերպի ըմբռնման ներմուծումը պատկանում է Մ. Աբեղյանին¹: Նա ընդունում էր կերպի չորս տեսակ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ: Մ. Աբեղյանի տեսությունը մասնակի փոփոխություններով ընդունվեց հայագետների կողմից: Կերպի ըմբռնման մեջ Մ. Աբեղյանը ընդունում էր դերբայ+օժանդակ բայ բայածևը, որտեղ կերպային իմաստներ տեսնում էր դերբայի մեջ, իսկ օժանդակ բային հատկացնում էր ժամանակային իմաստը: Փաստորեն կերպը Մ. Աբեղյանը տեսնում էր միայն սահմանական եղանակի վերլուծական և երկդորդական բաղադրյալ ձևերում: Մահմանական եղանակի անցյալ կատարյալի բայածևը դուրս էր մնում կերպային հակադրությունների համակարգից և մնացած եղանակների բայածև էրի հետ միասին դիտվում էր որպես պարզ կերպի արտահայտություն:

Հետագա քերականները, ընդունելով Մ. Աբեղյանի այս տեսակետը, սահմանական եղանակի բայածև էրից դուրս բողեցին հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերը (Ե. Աղայան)², որոնք Մ. Աբեղյանը մտցնում էր կատարված կերպի մեջ: Հայագետները տեսնում էին կերպի և ժամանակի սերտ փոխհարաբերությունը և քերականական այդ կարգերը դիտարկում էին միմյանցից անբաժան, կոչելով դրանք կերպաժամանակային: Հայերենի գիտական քերականության մեջ այս միտքը շարադրված է հետևյալ ձևով. «Գործողության կերպը ժամանակակից հայերենում անխզելիորեն կապված է ժամանակի կարգի հետ: Ժամանակի կարգից դուրս գործողության կերպ ժամանակակից հայերենում գոյություն չունի»³:

Հայ քերականները փորձում են զանել այն ձևարանական միջոցները, որոնցով բնորոշվում է հայերենի բայական կերպը, այսինքն՝ փորձում են առանձնացնել ժամանակի և գործողության կերպի քերականական կարգերը միմյանցից: Այսպես, Լ. Հովհաննիսյանը դասական գրաբարում անկատարություն և կատարյալություն կերպային հակադրությունը դիտարկում է ըստ ներկայի և անցյալ կատարյալի հիմքերի⁴: Փաստորեն նա գտնում է, որ ներկայի և կատարյալի հիմքերը կերպի արտահայտիչներ են: Ըստ լեզվաբաններ (Գ. Ղաֆանցյան, Ա. Ղաքիբյան, Ս. Աբրահամյան, Հ. Բարսեղյան և այլք) գրաբարում կերպի տևականության ձևարանական արտահայտություն են տեսնում *ան, են* ածանցներով կազմվող բայածևերում, որտեղ ներկայի հիմքին ավելացվող ածանցները տալիս են տևականության այդ հատկանիշը (հմտ. *ցանկամ-ցանկանամ, ուզեմ-ուզենամ, լողամ-լողանամ* և այլն): Սակայն կերպային այս իմաստները թույլ արտահայտություն ունեն գրաբարում, որտեղ բազմաթիվ դեպքերում այդ իմաստային հակադրությունը չէզոքանում էր⁵:

Հայերենի կերպի գործառության որոշ արտահայտություններ քննվել են նաև Իվ. Շիլակաձեի «Արդի հայերենի բայի խոնարհման կատեգորիաները» աշխատության մեջ⁶, որտեղ

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

² Տե՛ս Ե. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:

³ Մ. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 352:

⁴ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», 3, Երևան, 1975:

⁵ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 269:

⁶ Տե՛ս «Լեզվի և ոճի հարցեր», N 2, Երևան, 1964, էջ 155-292:

հեղինակը գտնում է, որ կերպերը որոշելիս հայերենում հաճախ խախտվում են տրամաբանական սկզբունքները, և կերպ էր տեսնում ինչպես անցյալ կատարյալի, այնպես էլ պայմանական եղանակի բայածև երբում: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը հայերենի բայական կերպի սահմանազատման ձևաբանական միջոցների առանձնացման յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում: Ընդդիմելով բայական երեք խմբեր, նա սրանցում առանձնացնում է մաքուր հիմք և կերպահինչ վերջամասնիկներ կառուցվածքային տարբերք: Առաջին խմբի մեջ մտնող բայերի մաքուր հիմքը երեք ներկա է (*գր-ում, խոս-ում*), այսինքն կատարվող կերպ, այն կարող է վերջամասնիկի միջոցով դառնալ կատարյալ (*գր-եց, խոս-եց*): Երկրորդ խմբի մեջ մտնում են այն բայերը (*թռել, վախչել*), որոնց հիմքը կատարյալի իմաստ ունի (*թռ-ավ, վախչ-ավ*): Եվ, վերջապես, երրորդ խմբում մաքուր հիմքը չեզոք է և վերջամասնիկների միջոցով դառնում է կամ ներկայի (*մտտ-եմ-ում, հեռ-ան-ում*), կամ կատարյալի հիմք (*մտտ-եց-ավ, հեռ-աց-ավ*): Գ. Ջահուկյանը երկրորդաբար կերպային արժեք է հատկացնում *կ* նախասմանիկին, որով կազմվող ձևերը նույնպես դիտարկվում է կերպային հակադրություններում⁷: Արեղյանական կերպային ըմբռնումների փոխարեն Գ. Ջահուկյանը առաջարկում է ժամանակային հաջորդականության կարգ՝ համընթացություն, նախորդում և հաջորդում հակադրվող եզրերով:

Հայ լեզվաբանական գրականության մեջ բայական կերպի քննության ժամանակ դիտարկվում են նաև այլ կարգի հատկանիշներ: Երբեմն որպես կերպի արտահայտություն դիտարկվում են օրինակ՝ միակատարություն-բազմակատարություն, տևականություն-ոչ տևականություն, եզրայնություն-ոչ եզրայնություն, ակնատեսություն-ոչ ակնատեսություն հակադրությունները: Կարծում ենք, պետք է որոշ կարգի հատկություն մտցնել նման հասկացությունների գործածության մեջ: Մենք գործողության կերպը և բայական կերպի մաստը փորձում ենք սահմանազատել մեկը մյուսից: Գործողության կերպը հայերենում չունի ձևաբանական հատուկ սահմանազատում: Այն կապվում է գործողության ընթացայնության հետ և կարող է լինել կատարվող, կատարված և կատարելի: Այս քերականական կարգը տարածվում է բայի խոնարհման բոլոր ձևերի վրա՝ ընդգրկելով բոլոր եղանակները: Սրա տարբերակման հիմնական հատկանիշը կարող ենք համարել եզրայնություն-ոչ եզրայնություն հակադրությունը: Մնացած կարգի իմաստները մենք ներառում ենք բայի կերպիմաստ հասկացության մեջ, որոնք կապվում են ինչպես բառիմաստի, այնպես էլ խոսքում բայական ձևերի գործածության հետ: Որպես կերպիմաստ կարելի է ընդունել միակատարություն-բազմակատարություն հակադրությունը, որն ունի իր ձևական (տվյալ դեպքում բառակազմական) արտահայտության միջոցները՝ ածանցում (*առտ, ոտտ, կոտտ, տ* բազմապատկական ածանցներ), քառաբարդում, (արմատի կրկնություն՝ *վազել-վազվզել*), ինչպես նաև հնչյունական փոփոխություններ (*թզալ-թզզալ, թշալ-թշշալ*), որոնք խոնարհման համակարգի ձևերում պահպանում են իրենց գործողության կերպի հակադրությունը՝

- թռչում է, թռչկոտում է- կատարյալ կերպ
- թռել է, թռչկոտել է- կատարված կերպ
- թռչելու է, թռչկոտելու է- կատարելի կերպ:

Բոլորն էլ ունեն բազմապատկականության բառային կերպիմաստը:

- վազում է, վազվզում է- կատարվող կերպ
- վազել է, վազվզել է- կատարված կերպ
- վազելու է, վազվզելու է- կատարելի կերպ:

Բոլորն էլ ունեն շարունակականության բառային կերպիմաստ:

- թշում է, թշշում է- կատարվող կերպ
- թշացել է, թշշացել է- կատարված կերպ
- թշալու է, թշշալու է- կատարելի կերպ:

Բոլորն էլ ունեն տևականության բառային կերպիմաստ:

Նշված բառային կերպիմաստները չեն ազդում գործողության կերպ հասկացության վրա, որը ունի կերպային իր հատուկ հակադրությունը:

⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, *նույնի* ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Երևան, 1974:

⁸ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը.- «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1993, ք. 1:

Նույնը կարելի է տարածել նաև *ան, են* ածանցներով կազմված ձևերի վրա, ինչպես՝ *լողում է-լողանում է*, անկախ նրանցում եղած բառային կերպիմաստային հատկություններից: Իրավացի է **Գ. Ջահուկյանը**, որ գտնում է, թե բառական այդ միջոցները անմիջապես չեն կապված խոնարհման հարուցույցի տարբերությունների հետ, այլ ավելի շուտ բառակազմական արժեք ունեն⁹:

Կերպի մեր ընթրնումը դիտարկում է այն որպես բայական գործողության արդյունք և չի հենվում պարզապես բայական իմաստի վրա: Կերպային նմանօրինակ իմաստներ մենք կարող ենք գտնել ոչ միայն բայերի մեջ, այլ նաև այլ խոսքի մասերի մեջ. օրինակ՝ *հաղթանակ և պարտություն* բառերը իրենց բառական իմաստով կարող են նշանակել ավարտական կերպ, *պայքար, մարտ, կոհիվ* բառերը կարող ենք դիտել որպես չավարտված կերպի արտահայտություն:

Նմանօրինակ բառական իմաստներ կարող ենք դիտարկել բայի ժամանակային քերականական կարգի մեջ: Ժամանակային ձևերը կարող են արտահայտվել տարբեր կարգի բառական միջոցներով՝ *այսօր, այժմ, այս պահին* բառերը կարող են, օրինակ, արտահայտել ներկա ժամանակի իմաստ, *երեկ, անցյալ օրը, նախկինում, վաղուց՝* կարող են արտահայտել անցյալ ժամանակի իմաստ, *վաղը, սպազայում, մի քանի օր հետո՝* կարող են արտահայտել ապառնի ժամանակի իմաստ:

Բառական կերպային իմաստի հետ զուգահեռ համատեքստում հանդես են գալիս գործողության ընթացայնության հետ կապված այլ կարգի հատկություններ, որոնք նպաստում են կերպի առանձնացմանը: Խոնարհման համակարգի բոլոր ձևերում ընդունելով եռաշարք հակադրություն և այն կապելով խոնարհված բայի արտահայտած իմաստի հետ՝ միշտ չէ, որ կարող ենք գտնել միայն այս հատկանիշներով հակադրվող միավորներ և երբեմն անհրաժեշտ է լինում դիմելու նաև այլ կարգի հատկանիշների: Ասենք, նման ձևով դժվար է կատարել վաղակատար և անցյալ կատարյալ բայաձևերի տարբերակում: Երկու դեպքի համար էլ ընդունելով, որ նրանք ունեն անցյալ ժամանակում ավարտված գործողության կերպ, մենք կարծես այս մակարդակում չունենք սրանց իմաստային հակադրության եզրեր: **Գ. Ջահուկյանը** այս բայաձևերի հակադրությունը կապում է ժամանակային հաջորդականության կարգի հետ: Վաղակատարով իրացված ձևերը համարում է ժամանակակետի նկատմամբ նախորդող, իսկ անցյալ կատարյալով ձևերը որպես ժամանակակետին համընկնող իրողություններ: Այս հակադրությունը փաստորեն ժամանակային է և ոչ կերպային: Մենք կարծում ենք, որ այս բայաձևերի մեջ կա և կերպային որոշակի հակադրություն, որը պայմանավորված է ինչպես սրանց ձևաբանական արտահայտությամբ, այնպես էլ գործողության կերպային իմաստը ամբողջացնող հատկանիշներով, այսինքն՝ ենթադրում ենք, որ այդ բայաձևերի կերպիմաստային հակադրության գաղափարը կա լեզվակիրների մտածողության մեջ, որի արդյունքն են համատեքստերում այդ բայաձևերի արտահայտած կերպիմաստային դրսևորումները, որոնց տարբերակմանը թերևս կարող են նպաստել համատեքստերում սրանց հետ հանդես եկող մակբայական ձևերը: Կան մի խումբ մակբայներ, որոնք հանդես են գալիս բայական այս կամ այն ձևի հետ: Ասենք, անցյալ կատարյալի ձևերի հետ առավել հաճախական են *խսլույն, հանկարծ, մեկեն, կտրուկ և* նման սահմանային, կոնկրետացնող, որոշակիացնող մակբայները, մինչդեռ վաղակատարով ձևերի համար ունենք *միշտ, վաղուց, որևէ ժամանակ, երբևէ* ժամանակային անորոշություն ցույց տվող ոչ եզրայնություն, ընդհանրություն արտահայտող մակբայները:

Մեր տեսակետն այն է, որ համատեքստում հանդես եկող այս մակբայները օգնում են բայաձևերում առկա, բայց թաքնված քերականական իմաստների (այս դեպքում կերպիմաստի) առավել հստակ տարբերակմանը:

Երբ հայերենի վաղակատարով և անցյալ կատարյալով արտահայտված բայաձևերը այլ լեզուներով թարգմանելիս հաճախ խառնում են հայերենում եղած կերպիմաստները, ապա թյուրիմացությունը բխում է նրանից, որ գործողության կերպով չեզոքացող այս բայաձևերը չեն հստակեցվում կամ տարբերակվում իրենց կերպիմաստային ամբողջության մեջ: Հաճախ այս ձևերի հակադրության մեջ տեսնում են ոչ թե կերպիմաստային տարբերություններ, այլ ժամանակային, ընդ որում անցյալ կատարյալը դիտարկվում է որպես վաղա-

⁹ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 235:

կատարից ժամանակով հաղորդման պահին ավելի մոտ գտնվող գործողություն: Եթե ժամանակային հակադրություն դիտարկենք, ապա այն առկա է վաղակատարի ներկա և անցյալ ժամանակաձևերի միջև, որպես ներկա և անցյալ ժամանակակետերին նախորդող գործողություն: Մինչդեռ անցյալ կատարյալ և վաղակատար (ներկա և անցյալ) ժամանակաձևերի միջև հակադրությունը կերպային է: Ասենք՝

Անցյալ տարի նամակ եմ գրել:

Անցյալ տարի նամակ էի գրել:

Անցյալ տարի նամակ գրեցի:

Երեքն էլ անցյալում ավարտված գործողություն են: Կերպիմաստային և ժամանակային քերականական կարգերի բարդ փոխհարաբերություն կարելի է տեսնել բարդ համադասական և ստորադասական նախադասություններում:

Այսպիսով, հայերենում բայական կերպը կապվում է գործողության ընթացայնության հետ և ունի կատարվող, կատարված ու կատարելի վիճակներ՝ ըստ եզրայնություն-նչ եզրայնություն հակադրության: Կատարվողը չունի եզրայնություն, իսկ կատարվածը ունի: Կատարելի՛ն ըստ էության գործողության կերպ չէ, այլ ենթադրելի գործողություն:

Կերպիմաստը իր հերթին ներառում է երկու կարգի հասկացություններ, մեկը կապված բայիմաստի հետ, որտեղ այն հանդես է գալիս բազմակիության, տևականության, սաստկության և նման կարգի այլ հատկանիշներով՝ իրենց ձևական արտահայտություններով հանդերձ, մյուսը՝ կերպին ուղեկցող հատկություններով՝ կապված նախադասության մեջ բայ ստորգյայլի արտահայտության համատեքստում արտահայտված ընդհանուր իմաստների, բայական օժանդակ միջոցների օգտագործման, լեզվական և արտալեզվական իրողություններով և կարող է ընդգծել այնպիսի հատկանիշներ, որոնք կապվում են ականատեսություն-նչ ականատեսություն, խոսողի մասնակցություն կամ որպես այդպիսին ընկալվելու (այսպես կոչված գործողության մեջ ինտեգրման) հատկություն, որոշակիություն-անորոշություն և նման կարգի այլ հասկացությունների հետ:

А. Г. БАХШЯН (Париж) - Вид и видовые значения.- Глагольная грамматическая категория вида - одна из проблематических в современном армянском языке. Впервые ее определяет М. Абебян, выделяя совершенный, совершаемый и совершимый виды. В дальнейшем категория вида в армянском языкознании рассматривается неразрывно с категорией времени, в соответствии с процессуальностью действия. Выделяемые виды противопоставляются по признаку предельность-непредельность (совершенный и совершаемый). Третий (совершимый) является собственно говоря не видом, а предполагаемым действием. В статье делается попытка разграничить вид глагольного действия и видовые значения, имеющие лексико-словообразовательное выражение. Устанавливаются видовые значения длительности, многократности, продолженности.